ԵԴ1/1468/01/26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5 մայիսի 2026 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԵԴ1/1468/01/26 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2026 թվականի ապրիլի 13-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2026 թվականի մարտի 23-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է Արթուր Ավագի

Ավագյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով թիվ 60193226 (ԵԴ1/1468/01/26) քրեական վարույթը:

1.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր՝ Գ.Պողոսյան) 2026 թվականի մարտի 27-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1468/01/26 քրեական վարույթն ստանձնելու և այն ըստ տարածքային ընդդատության Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

2. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Հ.Մեխակյան) 2026 թվականի ապրիլի 13-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1468/01/26 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի ապրիլի 27-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. Արթուր Ավագյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«(…) նա, պատշաճ կարգով տեղեկացված լինելով իր վերաբերյալ 2025 թվականի հուլիսի 4-ի թիվ ********** որոշմամբ տրանսպորտային միջոց վարելու իրավունքը 1 (մեկ) տարի ժամկետով կասեցված լինելու հանգամանքի մասին, 2025 թվականի դեկտեմբերի 31-ին՝ ժամը 10:15-ի սահմաններում, Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի, Երևանյան փողոցում վարել է ***** մակնիշի, ** ** *** հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը, ինչի վերաբերյալ ՀՀ ՆԳՆ ուսումնական պարեկային ծառայության աշխատակցի կողմից կազմվել է թիվ ********* արձանագրությունը: (…)»*[1]:

5. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2026 թվականի մարտի 27-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…)*

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 1, թերթ 26:

Թիվ ԵԴ1/1468/01/26 քրեական գործի նյութերից բխում է, որ առերևույթ առկա է համաձայնությամբ փուգանք նշանակելու վարույթ կիրառելու հիմքը, և բացակայում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 464.7-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանգամանքները:

Տվյալ դեպքում նկատի ունենալով նաև, որ ինչպես բխում է մեղադրյալ Արթուր Ավագի Ավագյանի մեղադրանքի փաստական նկարագրությունից ենթադրյալ արարքը ենթադրաբար կատարվել է «Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Երևանյան փողոցում», այսինքն՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքից դուրս՝ ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում, այսինքն՝ այն ընդդատյա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին և հաշվի առնելով, որ թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314-րդ հոդվածով նախատեսված վարույթի ընդդատության հարցը հնարավոր է քննարկել նույն օրենսգրքի 310-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշում կայացնելուց հետո, այն էլ՝ դատական նիստում, նախնական դատաքննությունների ընթացքում, սակայն հաշվի առնելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 464.8-րդ հոդվածի իրավակարգավորումների համաձայն՝ նույն օրենսգրքի 310-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշում հնարավոր է կայացնել միայն այն դեպքում, երբ բացակայում է համաձայնությամբ փուգանք նշանակելու վարույթ կիրառելու հիմքը և երբ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 464.7-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանգամանքները, ավելին՝ հաշվի առնելով նաև մեղադրյալ Արթուր Ավագի Ավագյանին համաձայնությամբ փուգանք նշանակելու վարույթ կիրառելու հնարավորությունից չզրկելու հանգամանքը՝ Դատարանը հանգում է այն հետևության, որ թիվ ԵԴ1/1468/01/26 քրեական գործով ըստ մեղադրանքի Արթուր Ավագի Ավագյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով, վարույթ ստանձնելուց և այն ըստ տարածքային ընդդատության ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելուց բացի այլ որոշում կայացվել չի կարող: (…)»[2]*:*

---

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 6:

6. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի ապրիլի 13-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Արթուր Ավագի Ավագյանին ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրվել է ենթադրաբար դիտավորությամբ կատարված ոչ մեծ ծանրության հանցագործություն: Ներկայացված մեղադրանքի ուսումնասիրությունից երևում է, որ Արթուր Ավագյանին մեղսագրվող արարքը ենթադրաբար կատարվել է Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Երևանյան փողոցում, որը ներառում է ինչպես Երևանից «Զվարթնոց» օդանավակայան տանող ճանապարհահատվածը («Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի հավելված 6-ի համաձայն այն գտնվում է Երևան քաղաքի վարչական տարածքում, իսկ ավելի կոնկրետ՝ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հավելվածի 5.7-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքում), այնպես էլ «Զվարթնոց» օդանավակայան տանող խաչմերուկի վերին՝ դեպի Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Պտղունք բնակավայր տանող ճանապարհահատվածը, որը գտնվում է Արմավիրի մարզի տարածքում: Այլ կերպ՝ ներկայացված մեղադրանքից պարզ չէ, թե Արթուր Ավագյանին մեղսագրվող ենթադրյալ արարքը կատարվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի, թե Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:*

Վերոշարադրյալ պայմաններում Դատարանն արձանագրում է, որ նմանատիպ դեպքերի համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված է հատակ կարգավորում՝ համաձայն որի՝ եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել ենթադրյալ հանցանքի կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը, իսկ սույն քրեական գործով նախաքննությունը կատարվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքում կատարված հանցագործությունների քննության բաժնի կողմից, որը գտնվում է Երևան քաղաքում:

(…) Այսպիսով, Դատարանը, հաշվի առնելով վերը նշված պատճառաբանությունը, Վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները և ելնելով ընդդատության պահպանման վերը նշված պահանջներից ու պարզելով, որ ստացված գործն ընդդատյա չէ ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, գտնում է, որ գործի հետագա քննությունը ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում անխուսափելիորեն կհանգեցնի մեղադրյալ Արթուր Ավագի Ավագյանի արդար դատական քննության հիմնարար իրավունքի խախտման, իսկ արդյունքում կայացված դատական ակտը ցանկացած դեպքում ենթակա կլինի բեկանման:

Ամփոփելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ թիվ ԵԴ1/1468/01/26 քրեական գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, ուստի թիվ ԵԴ1/1468/01/26 քրեական գործով վարույթը պետք է ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատ՝ վարույթի տարածքային ընդդատության հետ համաձայն չլինելու հիմքով: (…)»[3]*:*

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

7. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/1468/01/26 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի*

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 12-15:

առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

10. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ[6]:

11. *ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ «1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

(…)

3. Եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: (…)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

12. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Արթուր Ավագյանի վերաբերյալ թիվ 60193226 քրեական վարույթով նախաքննությունն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքում կատարված հանցագործությունների քննության բաժնում:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ Ա.Ավագյանին ներկայացված մեղադրանքի բովանդակությունից բխում է, որ վերջինիս կողմից ենթադրյալ արարքը կատարվել է Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Երևանյան փողոցում, այսինքն՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքից դուրս, ինչպես նաև այն, որ սույն վարույթով առկա է համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ կիրառելու հիմքը և բացակայում են դրա կիրառմանը խոչընդոտող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հանգամանքները, գտել է, որ բացի վարույթն ստանձնելուց և այն ըստ տարածքային ընդդատության Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին որոշում կայացնելուց, այլ որոշում կայացնել հնարավոր չէ:

Արդյունքում, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը սույն վարույթն ստանձնելով, այն ըստ տարածքային ընդդատության փոխանցել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան[7]:

- Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ Ա.Ավագյանին ներկայացված մեղադրանքի բովանդակությունից պարզ չէ, թե մեղսագրվող ենթադրյալ արարքը վերջինիս կողմից որ դատարանի դատական տարածքում է կատարվել, գտել է, որ սույն դեպքում կիրառելի է մեղադրանքի քննությունը՝ մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրի գտնվելու վայրի դատարանի կողմից իրականացնելու վերաբերյալ կարգավորումը[8]:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ Ա.Ավագյանին ներկայացված մեղադրանքի համաձայն՝ վերջինին վերագրվող արարքը կատարվել է Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Երևանյան փողոցում: Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ թեև նշված փողոցը փաստացի տեղակայված է Արմավիրի մարզի Փարաքար համայնքում, սակայն դրա մի հատվածը ներառված է **Երևան քաղաքի,** մյուս հատվածը՝ **Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական տարածքներում[9]:** Մինչդեռ, ոչ Ա.Ավագյանին ներկայացված մեղադրանքի ձևակերպումից, ոչ էլ վարույթի նյութերից հնարավոր չէ պարզել, թե Երևանյան փողոցի կոնկրետ որ հատվածում է կատարվել ենթադրյալ հանցավոր արարքը:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանի քրեական պալատն իր համաձայնությունն է հայտնում Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի այն հետևությանը, որ սույն վարույթի տարածքային ընդդատությունը որոշելիս պետք է հիմք ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը, համաձայն որի՝ մեղադրանքը

---

[7] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[9] Տե՛ս «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքները:

պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած մարմնի նստավայրը: Սույն վարույթով մինչդատական վարույթն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքում կատարված հանցագործությունների քննության բաժնում, որի նստավայրը գտնվում է Երևան քաղաքում:

14. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/1468/01/26 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հիմնավոր է:

15. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ԵԴ1/1468/01/26 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Արթուր Ավագի Ավագյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով թիվ ԵԴ1/1468/01/26 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ